Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Բերդի Կ. Մարդանյանի անվան թիվ 3 հիմնական

Թեմա՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ :

Վերապատրաստող, մենթոր՝ Էմմա Քոսակյան

Ուսուցիչ՝ Մարուսյա Քոսակյան

Երևան 2023

Բովանդակություն

1. Ներածություն……3

2. Գլուխ 1. Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ :……5

2. Գլուխ 2. Գործնական քայլեր ուսուցիչ-ծնող համագործակցության ամրապնդման համար։……9

3. Եզրակացություն……13

4. Առաջարկություններ……14

5. Օգտագործված գրականության ցանկ……15

Ներածություն

Դպրոցն արվեստանոց է, որտեղ ձևավորվում է աճող սերնդի միտքը:

Հարկավոր է այն ամուր պահել ձեռքում, եթե չես ցանկանում ձեռքից բաց թողնել ապագան:

Անրի Բարբյուս

Մեր երկրում յուրաքանչյուր երեխա ունի կրթության հիմնարար իրավունք, ինչն ամրագրված է ՀՀ օրենքներով, միջազգային պայմանգրերով և մի շարք ենթաօրենսդրական ակտերով: Ըստ այդմ՝ երեխայի այդ իրավունքը իրացվում է ուսուցիչների, աշակերտների, ծնողների համագործակցությամբ:

Հանրակրթության մասին օրենքում, մասնավորապես (գլուխ 5, հոդված 19) նշված է, որ կրթական գործընթացի մասնակիցներն են՝ սովորողը, սովորողի ծնողը, ուսուցիչը և մանկավարժական այլ աշխատողներ, խորհրդում և խորհրդակցական այլ մարմիններում ընդգրկված կրթության պետական կառավարման լիազորված մարմնի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները և այլ անձինք:

Վերոնշյալ շղթայի յուրաքանչյուր օղակ, եթե համագործակցում է, աշխատում է նպատակամետ, երեխայի կարիքին համապատասխան, միջավայրային խելամիտ հարմարեցումների ապահովմամբ, արդյունքում շահում է երեխան, արդարանում են ոչ միայն ընտանիքի, այլև դպրոցի սպասելիքները, արդյունքում ունենում ենք որակյալ կրթություն:

Գաղտնիք չէ, որ երեխան առաջին հերթին դաստիարակվում է ընտանիքում, նրա աշխարհայացքը, վարքագիծը, արժեքային համակարգը ձևավորվում են ընտանիքում, հասարակության մեջ, իսկ երբ երեխան հաճախում է դպրոց, նրա կրթության ու դաստիարակության գործում ավելանում է ևս մի կարևոր օղակ՝ դպրոցը:

Երեխայի կրթության ու դաստիարակության գործում ընտանիքը հասարակությունը և դպրոցը նույն հարթության վրա են և հավասարապես պատասխանատու:

Հատկապես հիմա, երբ զգալիորեն աճել է տեղեկատվության հոսքը, ինչն ազդում է դպրոցականների զարգացվածության և դաստիարակության ընդհանուր մակարդակի վրա: Ուստի վերոնշյալ վերտառությամբ հետազոտությունը չափազանց արդիական է:

Մարտահրավերներով լի մեր կյանքում սովորողների կրթական կարիքների լիարժեք բավարարումը մեծապես կախված է ծնող-ուսուցիչ հաստատուն կապից ու համագործակցությունից:

Փորձը ցույց է տալիս, որ ծնողների և ուսուցիչների արդյունավետ համագործակցության արդյունքում սովորողը ունենում է ակնհայտ ձեռքբերումներ, նրա մեջ ձևավորվում և զարգանում են 21-րդ դարի հմտությունները՝ քննադատական մտածողությունը, ստեղծարարությունը,համագործակցությունը, հաղորդակցությունը, տեխնոլոգիական գրագիտությունը, արդյունավետությունը, սոցիալական հմտությունները, նախաձեռնողականությունը, առաջնորդությունը, ճկունությունը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:

Ինչպես նշում է հայտնի մանկավարժ Վ. Ա. Սուխոմլինսկին, միայն ծնողների հետ միասին ընդհանուր ջանքներով ուսուցիչները կարող են երեխաներին հասցնել մարդկային մեծ երջանկության: (Վ. Ա. Սուխոմլինսկին, 1986թ, էջ 28):

Հետազոտության խնդիրներն են.

- Ուսումնասիրել «Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում» թեմայի տեսական նյութերը:
- Գործնականում իրականացնել ուսուցիչ-ծնող համագործակցության ամրապնդմանը ուղղված քայլեր:
- Կատարել արդյունքների ամփոփում, վերլուծություն և կազմել եզրակացություն:

Հետազոտության վարկածն է՝

Մենք կարծում ենք, որ ուսուցչի սերտ համագործակցությունը սովորողների ծնողների, կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում կբերի կրթության որակի բարձրացման:

Հետազոտության ընթացքում կփորձենք բացահայտել այդ վարկածը՝ կիրառելով հետևյան մեթոդները.

- ծնողների և ուսուցիչների շրջանում սոցիոլոգիական հարցումներ
- դիտարկումներ
- դիտման մեթոդ
- հաջողության պատմություն

Գլուխ 1. Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ :

Ընտանիքն այն միջավայրն է, որտեղ ձևավորվում է երեխայի անհատականությունը, արժեքային համակարգը: Ընտանիքն օգնում է երեխային յուրացնել ավագ սերունդների կյանքի և աշխատանքի դրական փորձը, կուտակել գործունեության, սովորույթների, հարաբերությունների արժեքավոր անհատակ փորձ:

Ընտանքիները նման չեն իրար: ամեն ընտանքի ունի իր դժվարություներն ու խնդիրները: Երբ այս ամենով հանդերձ երեխաները մեկտեղվում են մեկ դասարանում, ուսուցչից պահանջվում է գիտելիքներ, փորձ ու հմտություն ծնողների հետ փոխգործակցություն հաստատելու, շփվելու, մեթոդների ու միջոցների ընտրության հարցում:

Ուսուցիչ-ծնող կապի ձևավորումն ու պահպանումը ուսումնական գործընթացում աշակերտի հաջողության գրավականն է: Այս համագործակցության միջոցով սովորողի համար կարելի է ապահով կրթական այնպիսի միջավայր, որտեղ երեխան կզգա իրեն պաշտպանված, կարևոր և գլխավոր դերակատարներից մեկը:

Ծնողի ներգրավումը իր երեխայի կրթության գործում խիստ կարևոր է երեխայի ուսումնառության, դաստիարակության ու զարգացման գործում:

Այս կապի ձևավորման և զարգացման մեջ անուրանալի է ուսուցչի դերը:

Նա պետք է.

- Ծնողին կամ նրա օրինական ներկայացուցչին դիտի որպես գործընկեր, հաղորդակցվի նրանց հետ տարբեր միջոցներով
- Հրավիրի ծնողներին իրենց մասնակցությունը բերելու դպրոցական տարաբնույթ միջոցառումներին
- աջակցի ծնողին տնային պայմաններում ուսումնառությունը կազմակերպելու նպատակով
- աջակցի ընտանքիներին ռեսուրսներից և ծառայություններից օգտվելու հարցում
- օգնել սովորողի ծնողին կոնֆլիկտային ցանկացած իրավիճակում

Արդյունքում սովորողը միշտ կլինի ուշադրության կենտրոնում և հեշտությամբ կլուծի իր խնդիրները:

Հետազոտությունները ցույց են տվել, որ աշակերտները ավելի լավ են սովորում, երբ ծնողը կամ խնամակալը ներգրավված են ուսումնական գործընթացում, երբ միասնական պատասխանատվություն են կրում սովորողի հաջողությունների և ուսման բարելավման և թերացումների մեջ: Երբ ծնողը ներգրավված է կրթության

գործընթացում, բարելավվում է աշակերտի ոչ միայն առաջադիմությունը, այլև հաճախելիությունը. երեխան անհարկի չի բացակայում, դրական իմաստով փոխվում է վարքը թե ՛ տանը, թե՛ դպրոցում: Ծնողը տեղեկացված է լինում իր զավակի կրթական կարիքների մասին:

Նկար 1

Ինչպես նշում է Ռ. Մուրադյանը (Դասղեկ 2007թ), ուսուցիչ-ծնող համագործակցությունը ներառում է երեք հիմնական ուղղություններ.

- Ծնողների հոգեբանամանկավարժական տեղեկացվածություն
- Ծնողի մասնակցությունը ուսումնադաստիարակչական գործընթացին
- Ծնողի մասնակցութունը դպրոցի կառավարմանը

Ծնողների հոգեբանամանկավարժական տեղեկացվածությունը ենթադրում է ընտանքիների հետ աշխատանքի հետևյալ ձևերի կազմակերպում.

- ծնողական համալսարաններ
- կոնֆերանսներ
- անհատակ և թեմատիկ խորհրդատվություններ
- ծնողական ժողովներ
- սեմինարներ

Ծնողներին դասարանի ուսումնադաստիարակչական աշխատանքների կարելի է ներգրավել՝ կազմակերպելով գործունեության հետևյալ ձևերը.

- բաց դասեր և արտադասարանական միջոցառումներ
- երեխաների և ծնողների ստեղծագործության օրեր
- մասնակցություն դպրոցի և դասարանի աշխատանքներին
- ծնողական հսկողության սահմանում դասարաններում

Ծնողների մասնակցությունը դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարմանը կարելի է կազմակերպել հետևյալ ձևերով.

- դասարանի ծնողների մասնակցությունը դպրոցի խորհրդի աշխատանքներին
- դասարանի ծնողների մասնակցությունը ծնողական խորհրդի աշխատանքներին
- ծնողի մասնակցությոնը դպրոցի կազմակերպչական աշխատանքներին

Ուսուցիչը մեծ ուշադրություն պետք է դարձնի դասարանի ծնողների տեղեկացվածությանը, որը օգնում է ծնողների մանկավարժական մտածելակերպի և դաստիարակչական հմտությունների ձևավորմանը;

Ծնողների մասնակցության ձևերից մեկը դպրոցի և դասարանի ծնողական խորհրդի գործունեությունն է: Սովորաբար ծնողական խորհրդի անդամներ են դառնում ամենաակտիվ և փորձառու ծնողները: Ծնողական խորհրդի նիստերն անց են կացվում ամիսը մեկ անգամ, սակայն անհրաժեշտության դեպքում կարելի է անցկացնել նաև երկու անգամ: Դասարանի ծնողական խորհուրդը ներգրավում է ծնողներին արտադասարանական միջոցառումների կազմակերպման և անցկացման գործին:

Ծնողների հետ աշխատանքի մի հետաքրքիր և արդյունավետ ձև է նաև ծնողական համալսարանը, որի նպատակն է համալրել ծնողների մանկավարժական և հոգեբանական գիտելիքները, ծանոթացնել նրանց դաստիարակության և մանկավարժության ժամանակակից խնդիրներին:

Ծնողական համալսարանում պարապմունքները կարող են անցկացվել զանազան ձևերով՝

- ✓ կոնֆերանսներ,
- ✓ հարց ու պատասխաններ
- ✓ դասախոսություններ
- ✓ սեմինարներ

Ուսուցիչ-ծնող կապը ավելի կամրապնդվի, եթե հաճախակի հրավիրվեն ծնողական ժողովներ, հանդիպումներ, խորհրդատվություններ, կատարվեն տնայցեր, կազմակերպվեն համատեղ տարաբնույթ միջոցառումներ: Այդ կապը ավելի նպատակային կդարձնենք, եթե օգտագործենք ժամանակակից տեխնոլոգիական միջոցներ՝ հեռախոս, համակարգիչ:

Թեև ծնողները հնարավորություն ունեն մուտք գործել էլեկտրոնային մատյան և տեղեկանալ իրենց երեխային առաջադիմության մասին, բայց ուսուցիչը տեխնոլոգիական միջոցներով կարող է ծնողին տեղյակ պահել կրթական այլ կարիքների, կարգապահական խնդիրների մասին և միասնաբար լուծման ուղիներ որոնել:

Տեխնոլոգիաները արագ և հրատապ տեղեկատվության գործիքներ են, որոնք հնարավորություն են տալիս ուսուցչին աշակերտի առաջադիմության, հետընթացի կամ վարքի մասին ցանկացած տեղեկություն հաղորդել:

Կարևոր են նաև ծնողական կոնֆերանսները, դեմ առ դեմ հանդիպումները, երեխայի առաջընթացի հաշվետվությունները, որոնք կարող են ուղարկվել տուն շաբաթական, ամսական կամ մի քանի անգամ:

Ուսուցիչ-ծնող կապի գործուն և արդյունավետ ձև է ամսական տեղեկագիրը, որի մեջ ուսուցիչը կարող է ներառել ամսական նպատակներ, դպրոցական միջոցառումներ և այլն:



Աղյուսակ 1

Բոլոր ժամանակներում էլ կրթության արդյունավետության բարձրացումը օրակարգային է եղել: Այսօր առավել ևս: Այսօրվա դպրոցականի կրթության և դաստիարակության գործում հասարակությունը ընտանիքին, դպրոցին նոր մոտեցումներ են պետք:

Գլուխ 2. Գործնական քայլեր ուսուցիչ-ծնող համագործակցության ամրապնդման համար:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:

Ինչպես նշում է հայտնի մանկավարժ Վ. Ա. Սուխոմլինսկին, միայն ծնողների հետ միասին ընդհանուր ջանքներով ուսուցիչները կարող են երեխաներին հասցնել մարդկային մեծ երջանկության: (Վ. Ա. Սուխոմլինսկին, 1986թ, էջ 28):

Հետազոտության խնդիրներն են.

- Ուսումնասիրել «Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում» թեմայի տեսական նյութերը:
- Գործնականում իրականացնել ուսուցիչ-ծնող համագործակցության ամրապնդմանը ուղղված քայլեր:
- Կատարել արդյունքների ամփոփում, վերլուծություն և կազմել եզրակացություն:

Հետազոտության վարկածն է՝

Մենք կարծում ենք, որ ուսուցչի սերտ համագործակցությունը սովորողների ծնողների, կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում կբերի կրթության որակի բարձրացման:

Հետազոտության ընթացքում կփորձենք բացահայտել այդ վարկածը՝ կիրառելով հետևյան մեթոդները.

- ծնողների և ուսուցիչների շրջանում սոցիոլոգիական հարցումներ
- դիտարկումներ
- դիտման մեթոդ
  հաջողության պատմություն

Մեր աշխատանքային փորձը ցույց է տվել, որ կրտսեր դպրոցում ծնողներն ավելի են ներգրավված ուսումնական գործընթացի մեջ, քան միջին և ավագ դպրոցում: Նույնիսկ տարրական դպրոցի ծնողները ինքնակամ են գալիս:

Իրավիճակը շտկելու համար Բերդի թիվ 3 հիմնական դպրոցում մշակվեց մի ռազմավարություն, «Բաց դռների օր», որի ընթացքում շաբաթական երեք օր ծնողը

գալիս է դասալման իր նախընտրած առարկայից և տեսնում իր երեխայի հաջողություններն ու բացթողումները տվյալ առարկայից:

Մենք սոցիոլոգիական հարցում անցկացրինք և՛ ծնողների և՛ ուսուցիչների շրջանում: Դիտարկեցինք աշակերտներին «Բաց դռների օր» միջոցառումից հետո և ստացանք հետևյալ պատկերը: Կից ներկայացվում է ծնողների և ուսուցիչների համար նախատեսված հարցաթերթիկների օրինակներ:



Նկար 1



Նկար 2

1. «Կարևորու՞մ եք արդյոք ուսուցիչ-ծնող (խնամակալ) համագործակցությունը» հարցին և՛ ուսուցիչները, և՛ ծնողները ***այո էին*** պատասխանել:

2. Ձեր կարծիքով մեր դպրոցում պարբերաբար կազմակերպվող «Բաց դռների օր» միջոցառումը նպաստու՞մ է կրթության որակի բարձրացմանը: Այս հարցմանը ենթարկված ուսուցիչների 80%-ը կարծում է, որ այն բարենպաստ ազդեցություն է թողնում կրթության որակի բարձրացմանը: Նույն կարծիքն են հայտնել նաև ծնողների 90%-ը:

Աշակերտների շրջանում արված դիտարկումները ցույց են տվել, որ ծնողների հաճախակի այցելություններն ու դասալսումներն իրենց զգաստ են պահում և ավելի լավ են սովորում, որ մայրիկի մոտ ամոթով չմնան: Այս համագործակցության արդյունքում երեխաների առաջադիմությունը բարձրանում է, աշակերտներն ավելի կարգապահ են դառնում: Դիտարկված աշակերտների առաջադիմությունը բարձրացել է 20%-ով:



Աղյուսակ 2

Ուսուցիչ-ծնող համագործակցության վառ ու արդյունավետ օրինակ է նաև այս դեպքը.

Երբ 5-րդ դասարանում դասղեկ դարձա, մի տղա կար դասարանում, որ դպրոց չէր ուզում գալ, մայրը մի կերպ, խաբելով, խոստումներ տալով բերում էր դպրոց, տղան պատճառաբանում էր, որ փորը ցավում է, գլուխն է ցավում, ամեն անգամ մի պատճառաբանությամբ ուզում էր տուն գնալ: Պարբերաբար ծնողի հետ իրականացվում էր խորհրդատվություն երեխայի վարքի վերաբերյալ: Ծնողին հրավիրեցի դպրոց, խոսեցինք երեխայի խնդիրների, դժվարությունների մասին: Որոշեցիքն, որ երեխայի հետ պետք է հոգեբան աշխատի: Մայրը սիրով համաձայնեց: Կապ հաստատվեց Հայ օգնության ֆոնդի երեխաների ցերեկային կենտրոնի հոգեբանի հետ, ով սկսեց աշխատել երեխայի հետ: Իսկ համադասարանցի մի աղջկա խնդրեցի, որ առավոտ իր հետ դպրոց գա: Այս բարեհամբույր աղջկա ընկերությունը դրական արդյունք տվեց: Մեր ջանքները հաջողությամբ պսակվեցին: Հիմա այն երեխան, առանց մայրիկի դպրոց է գալիս, դարձել է ինքնավստահ, նույնիսկ ձեռագրի մեջ է փոփոխություն կատարվել: Նախկինում մի էջում 4-5 բառ էր գրում՝ լուսանցքը հաշվի չառնելով: Հիմա կանոնավոր ձեռագիր ունի: Շփվում է համադասարանցիների հետ:



Աղյուսակ 3

Մենք՝ուսուցիչներս, պարտավոր ենք մեր մասնագիտական գիտելիքներով, բարոյական կերպարով, պահվածքով վստահություն ներշնչել ծնողներին իրենց երեխայի կրթության, դաստիարակության և զարգացման գործում:

Եզրակացություն

Ելնելով մեր դպրոցում իրականացրած ծնող-դպրոց համագործակցության հետազոտությունից և արդյունքներից, կատարված դիտարկումներից կարող ենք եզրակացնել, որ ուսուցիչ-ծնող համագործակցությունը դրական ազդեցություն է թողնում երեխայի անհատականության և ուսումնառության վրա: Ուսուցիչ, սովորող, ծնող կամ օրինական ներկայացուցիչ համագործակցությունը կարևոր գործընթաց է բոլոր կողմերի համար: Կողմերը պիտի քաջ գիտակցեն, որ համագործակցության հիմքում երեխայի կրթության իրավունքի իրացումն է:

Կողմերի համագործակցությունը պետք է հիմնված լինի մարդկային բարձր և բարոյական որակների վրա: Այս պարագայում չի կարելի ստորադասել որևէ մեկի գործառույթները:

Հարկավոր է հաճախակի հրավիրել ծնողական ժողովներ, որպեսզի հնարավոր լինի մշտադիտարկել կրթական հնարավոր խնդիրներն ու սովորողների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված վարքային շեղումներն ու գտնել լուծման տարբերակներ:

Անհրաժեշտ է մյուս սովորողների ծնողների մեջ ևս ստեղծել բարոյահոգեբանական կայուն միջավայր: Շատ կարևոր է նաև մանկավարժական խորհրդատվությունը ծնողին: Ուսուցիչը իր մասնագիտական գիտելիքներով, փորձառությամբ, դիտարկումներով ցանկալի է, որ կիսվի ծնողների հետ:

Համագործակցության մեջ կարևոր է նաև փոխադաձ հարգանքն ու արժեքային համակարգ, դիրքորոշում ունեցող, դաստիարակված, գիտակից անձնավորության ձևավորումը:

Առաջարկություններ

1. Մենք առաջարկում ենք ստեղծել մի հարթակ, որտեղ ուսուցիչները իրենց հաջողված փորձի մասին կարող են կիսվել:

Հանրապետության տարբեր դպրոցներում կան հաջողված պատմություններ ուսուցիչ-ծնող կամ խնամակալ կապի վերաբերյալ: Մենք առաջարկում ենք ստեղծել մեկ միասնական հարթակ համացանցում, որտեղ տարբեր դպրոցների ուսուցիչներ կկիսվեն իրենց փորձով, ինչը, կարծում ենք, ուսանելի կլինի գործընկերների համար: Նրանք կհարստացնեն իրենց զինանոցը, կկատարեն փորձի փոխանակում:

2. Այդ հարթակում քննարկվի այն մեթոդները, հնարքները որոնցով ուսուցիչը հասել է ցանկալի արդյունքի: Նաև այն խոչընդոտների մասին, որոնք հանդիպել են այդ ճանապարհին:

Գրականության ցանկ

1. «Եթե երեխան ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք» «Պերսպեկտիվա» հրատարակչություն, Երևան, 2004թ.
2. Մ. Ա. Մազմանյան, «Մանկավարժական հոգեբանության մի քանի հարցեր», «Լույս» հրատարակչություն, Երևան, 1975թ.
3. Մանկավարժական միտք, «Զանգակ-97» հրատարակչություն, Երևան 2000թ.
4. Ռ. Մուրադյան «Դասղեկ», «Գիտություն» հրատարակչություն, 2007թ.
5. Սիփան Հայրապետյան և այլք, «Սոցիալական հավասարությունը և արդարությունը դպրոցում», Տպարան» հրատարակչություն, Երևան, 2020թ.
6. Վ.Ա. Սուխոմլինսկի, «Սիրտս նվիրում եմ երեխաներին. կոլեկտիվ դաստիարակելու մեթոդիկա», «Լույս» հրատարակչություն, 1986թ.
7. ՀՀ օրենք հանրակրթությն մասին, Երևան, 2009թ., հուլիսի 10, arlis.am
8. Հարակրթության պետական չափորոշիչ, 2021թ., arlis.am
9. hy.eferrit.com
10. aspu.am
11.forchild.am
12. armenia.savethchildren.net
13. kargiskola.ge